

## «ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»

ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

### Ընկերության հետագա զարգացման խնդիրները և նպատակները

*Հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար Ընկերության հետագա զարգացման խնդիրները և նպատակները հետևյալն են.*

- Ընկերությունը կշարունակի իր հիմնական գործունեությունը՝ գործընկեր ֆինանսական հաստատությունների կողմից տրամադրված բնակարանային հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորումը:

- Ըստ կանխատեսումների, Ընկերության կողմից իր գործընկերներին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը 2016թ.-ին կաճի մոտ 25%-ով՝ կազմելով մոտ 42.5 մլրդ ՀՀ դրամ: Այդ ժամանակահատվածում Ընկերությունը նախատեսում է վերաֆինանսավորել գործընկեր բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից բնակչությանը տրամադրվելիք ավելի քան 1500 վարկ ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում:

- Իր գործունեության ծավալները մեծացնելու և հիփոթեքային վարկավորումը աշխուժացնելու նպատակով Ընկերությունը միջոցներ կձեռնարկի ընդլայնելու իր

գործընկերների ցանկը, ինչպես նաև կիրականացնի բնակչության իրազեկման միջոցառումներ՝ շեշտադրելով ՀՀ մարզերը:

- Իր գործունեության ֆինանսավորման նպատակով Ընկերությունը կօգտագործի ինչպես ներկայում իրեն հասանելի միջոցները (սեփական միջոցներ, Ֆրանսիական զարգացման գործակալության հետ կնքված վարկային գիծ), այնպես էլ պարտատոմսերի թողարկումից և տեղաբաշխումից ստացված միջոցները: Մասնավորապես, 2016 թվականի ընթացքում Ընկերությունը նախատեսում է տեղաբաշխել 2-3 միլիարդ ՀՀ դրամի պարտատոմսեր: Հաշվի առնելով տնտեսության առկա իրավիճակը և հնարավոր ներդրողների կողմից ներկայացվող պահանջարկը՝ կանխատեսվող ժամանակաշրջանում Ընկերության կողմից թողարկված պարտատոմսերը կլինեն մեկից մինչև երեք տարի մարման ժամկետով:

Միևնույն ժամանակ, Ընկերությունը նախատեսում է քայլեր ձեռնարկել արտաքին այլ աղբյուրներից (միջազգային զարգացման գործակալություններից) դրամական միջոցների ներգրավման ուղղությամբ՝ նպատակային ծրագրեր իրականացնելու նպատակով: Մասնավորապես, 2016թ-ի ընթացքում կմեկնարկի Գերմանիայի Դաշնության KfW զարգացման բանկից ներգրավված «Հայաստանի բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացում 4-րդ փուլ» 20 մլն եվրո ծավալով վարկային ծրագիրը, որն ուղղված է բնակելի անշարժ գույքի էներգոարդյունավետության բարձրացմանը և մարզերում հիփոթեքի զարգացմանը:

Ինչպես և հիմնադրման օրվանից, Ընկերության ռազմավարությունն ուղղված է լինելու խելամիտ և կառավարելի ռիսկայնության և շահութաբերության համակցությանը: